ՊԱՇՏՈՆԱԿԱՆ



ՀԻՄՆԱՐԿԵՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ԳՅՈՒՂՈՒՄ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1 դեկտեմբերի 2000 թ.:

Այսօր, ձեռամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի, տեղի ունեցավ Մասիսի շրջանի Մարմարաշեն գյուղի Ս. Գևորգ եկեղեցու հիմնարկեքի արարողությունը:

Նախկինում այստեղ գործել է Ս. Սարգիս եկեղեցին, որը խորհրդային իշխանության տարիներին ավերվել է: Այդ եկեղեցուց 16 քար ջրով, գինով լվանալուց և Սըրբալույս Մյուռոնով օծվելուց հետո տեղադրվեց նորակառույց եկեղեցու հիմքում՝ անվանվելով 12 Առաքյալների և 4 Ավետարանիչների անուններով: Եկեղեցու բարերարն է մոսկվաբնակ հայ գործարար Սերգեյ Կազարյանը:

«Դուք տեսաք ձեր աչքերով, որ այսօր կատարեցինք եկեղեցու հիմնարկեքի արարողություն՝ հոգու աչքերով, եկեղեցու միջոցով կապվելով մեր Արարչի, մեր Փրկչի և Ս. Հոգու շնորհներին»,- հանդիպման ավարտին իր շնորհավորանքն ուղղելով հավատավոր ժողովրդին՝ ասաց Նավասարդ Սրբազանը:

1700-ամյակի շրջանակներում կատարվող այս արարողությանը ներկա էին 1700-ամյակի գրասենյակի վարիչ-քարտուղարի օգնական Աշոտ աբեղա Մնացականյանը, Ս. Սարգիս եկեղեցու քահանա հայրեր, եկեղեցու ճարտարապետ Հրաչյա Գասպարյանը, Մասիսի քաղաքապետ Սաշիկ Հակոբյանը, գյուղապետ Էդիկ Հակոբյանը, մարզպետարանի ներկայացուցիչներ, ինչպես նաև Աջարիայի հայ համայնքի նախագահ Արմեն Գևորգյանը: